# Սարագյուղ

Վարչական պատասխանատու՝ Գրիգորյան Գրիգոր

Հեռ 094-71-17-40

**Մակերես՝** 16.4կմ$^2$

**Բնակչություն՝** 233

saragyugh.shirak@mta.gov.am

Սարագյուղ, (Сарагюг, Saragyugh), Դարագյուղ, Դարաքեյ, Դարաքենդ, Դարաքյոյ, Դարաքոյ, Դարաքվայ, Սարա գյուխ - Գյուղ ՀՀ Շիրակի մարզում (04.12.1995 թ), նախկին Աշոցքի շրջ-ում, նրա հս կողմում, Ծաղկաշեն գետի վերնա գավ-ում, Ջավախքի լշ-ի արմ լանջին: Ս է վերանվանվել 12.11.1946 թ: Կլիման ցուրտ է, տեղումները՝ բավարար: Առանձնատների մեծ մասը քարաշեն է, հարմարավետ: Խմելու ջուրը՝ տեղից: 1873 ք ուներ 135, 1897-ին՝ 266, 1926-ին՝ 378, 1931-ին՝ 468, 1939-ին՝ 579, 1959-ին՝ 320, 1970-ին՝ 349, 1979-ին՝ 287, 1989-ին՝ 208 հայ բնակիչ: Զբաղվում են անասնապահությամբ, նաև հացահա տիկի և կերային կուլտուրաների մշակութ յամբ: Ունի 8-ամյա դպրոց, ակումբ-գրադարան, բուժկայան և մի կանգուն, անշուք եկեղեցի: 1988 թ դեկտեմբերի 7-ի երկրաշարժի պատճառով եղել են ավերածություններ, որոնց վերականգնմանր մասնակցել են Պոլտավայի մարզի շինարարները:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Սարագյուղ

Ինդեքս՝ 2802